

ՕՐԹՈԴՈԽԸ ԵԿԵՂԵՑԻ

«Россия» (№ 1527) լրագրին հաղորդում են Սովիայից.
«Հուելեայն բանակցութիւնները տիեզերական պատրիարքա-
րանի և բոլգար էկզարխատի միջև փոխադարձ հաշտութեան
մասին վերջին ժամանակներս ստացել են բարեյաջող ուղ-
ղութիւն և շարունակում են մեծ եռանդով։

Թուրքաց պալատի բոլգար պատգամաւորները այցե-
լել են պատրիարքին։ Սպասում է, որ նոյն պալատի յոյն
պատգամաւորներն էլ կայցելեն բոլգար էկզարխին։ Թուր-
քիայի քրիստոնեաների մտերմական յարաբերութեան
անհրաժեշտութիւնը առաջ է եկել քաղաքական հանգա-
մանքով և հետևանք է յոյն-բոլգարական քաղաքական ընդ-
հանուր ուղղութեան, որ ձգտում է հաշտութեան։

Պատրիարքարանը պատրաստ է ընդունել բոլգար եկե-
ղեցու անկախութիւնը։ Մնում է վճռել թուրքաց պետու-
թեան մէջ բոլգարական էկզարխատի հոգեոր իրաւուսու-
թեան սահմանը, որի դէմ է եղել միշտ պատրիարքարանը,
բայց այժմ հիմք կայ սպասելու, որ այդ հարցը բարեյա-
ջող ելք կունենայ։ Յոյներն ու բոլգարները միանգամայն
խոստովանում են համերաշխ գործակցութեան անհրա-
ժեշտութիւնը, ի նկատի ունելով երիտասարդ-թուրքերի
անձուկ ազգայնականութիւնը»։

Պաղեստինի յոյն և արար օրթոդոքս քրիստոնեաների
մէջ տարածայնութիւնները շարունակում են։

Արաբները պահանջում են՝

1. որ ընդհանուր խորհուրդներ լինին, որոնց պարտ-
քը պէտք է լինի հոգալ նաև արար հասարակութիւնների
հաստատութիւնների բարեկարգութեան համար։ Կառա-
վարութիւնը այս պահանջը արդարացի է գտել, և կը գոր-
ծադրուի։ Երբ խորհրդի անդամների ընտրութեան կանո-
նադրութիւնը կը մշակուի։

2. Որ երուսաղէմի պատրիարքարանի կանոնադ-

թիւնն փոխուի և կ. Պօլսոյ պատրիարքարանի պէս Երուսաղէմի պատրիարքարանում ևս կազմուած լինի խորհուրդ, որի ¹ 5-ը լինեն հոգևորականներ և ² 5-ը աշխարհական, և խորհրդի պարտաւորութիւնը լինի հակել դպրոցների, եկեղեցիների և կալուածքների վերայ և վերահսկութիւն ունենալ նրանց գրամական հաշիւների վերայ։ Մերժելով կանոնագրութիւնը փոփոխելը կառավարութիւնը ցանկալի է համարել, որ 12 հոգուց կազմուած մի խառնյանձնաժողով լինի Երուսաղէմում, պատրիարքի կամ նրա տեղապահի նախագահութեամբ, յանձնաժողովի անդամներից 6-ը լինին հոգևորական նշանակած պատրիարքարանից և 6-ը աշխարհական՝ ընտրուած ժողովրդից, որոնց ընտրութեան համար կը կազմուի առանձին կանոնադրութիւն, Խորհրդի կազմի կեսը իւրաքանչիւր տարի պէտք է փոխուի:

Յանձնաժողովի պատքը լինելու է քննել ամսւանական խնդիրները, ունենալ վերահսկութիւն շարժական և անշարժ գոյքերի վերայ, որոնք կտակուած կը լինին յօդուտեկեղեցիների և բարեգործական հաստատութիւնների, հակել օրժողոքս տեղացիների դպրոցների վերայ նրանց կառավարութեան և ուսման վերաբերութեամբ, դպրոցները ու հիւանդանոցը բարելաւել, աղքատներին և կարօտներին նպաստը հաւասարապէս բաշխել և այլն։ Եւ պատրիարքարանը իւր միջոցներից տարեկան 30 հազար օսմ. լիրա (լեռան 8 ռ. 64 կ.) յանձնաժողովի տրամադրութեան տակ դնի, որ պէտք է գործադրուի դպրոցների և այլ բարեգործական ու հասարակական հաստատութիւնների համար։

3. Որ վանական միաբանութիւնների մէջ ընդունուին տեղացիներ էլ, որոնք կը համապատասխանին կանոնադրութեան պահանջներին, և միայն նրանք կարողանան աբեղայ դառնալ, որոնք խառն ժողովի կողմից արժանի կը համարուեն։ — Կառավարութիւնը պատրիարքարանի հետ միասին համաձայն է, որ տեղացիներ էլ ընդունուեն վանական միաբանութիւնների մէջ, բայց խառն ժողովի իրաւ-

ւասութիւնը կրօնաւոր ընդունելու վերաբերութեամբ՝ չէ ընդունում։

4. ա. որ տեղացիները պատրիարքի ընտրութեան վերաբերութեամբ աւելի ընդարձակ իրաւունքներ ունենան. բ. որ Սինօդը միայն հոգեւոր գործերում իրաւունք ունենայ և Սինօդի անդամ նշանակուեն արար քահանաւներ (խուրի) եւլ—Կառավարութիւնը այս առաջարկը մերժել է, հիմնուելով օրէնքի այն կէտի վերայ. որ Սինօդի անդամները պէտք է լինին եպիսկոպոսներ և վարդապետներ։ Իսկ ինչ վերաբերում է պատրիարքի ընտրութեան, օրէնքն ասում է, որ ժողովուրդը պատրիարքի ընտրութեան մասնակցում է իրանց քահանաների միջոցով, որոնք ընտրութեան թէ առաջին և թէ երկրորդ ժողովներին ներկայ են լինում։

5. ա. որ առաջնորդ եպիսկոպոսները իրանց թեմերում մնան և ոչ երաւաղէմում, բ. որ ժողովուրդը ինքն ընտրի իւր եպիսկոպոսներին, վարդապետներին, քահանաներին և սարկաւագներին։ Թէև պատրիարքարանը առ այս առարկել է, որ Պաղեստինի եպիսկոպոսները ուրիշ պատրիարքութիւնների հանդամանքում չեն, նրանք բէրաթով չեն հաստատում և իրանց թեմերից ռոճիկ չեն ստանում, սակայն կառավարական յանձնաժողովը ինկատի ունենալով, որ տրտունջները վերջ չեն ունենալու, գտել է, որ տեղացիների այս պահանջի ա. կէտը արդար է և եպիսկոպոսները իրանց թեմերում պէտք է ապրեն։ Իսկ պահանջի բ. կէտը անպայման մերժել է։

6. որ Պաղեստինի ազգաբնակութիւնը եկեղեցական գործերում հաւասար իրաւունք ունենան, որ կրօնաւորները հրաժարուեն աշխարհային գործերից։ Պատասխանը եղել է ընդհանուր մտքով, այն է ժողովրդի միւս ցանկութիւնների համեմատ կատարել։

Բացի այս գլխաւոր պահանջներից Պաղեստինի ներկայացուցիչները պահանջում են կրօնաւորների արտօնութիւնները բոլորովին ոչնչացնել, և օտարահալատակներին կրօնաւոր չընդունել։—Պետական յանձնաժողովը մերժել է

կրօնաւորների արտօնութիւնը ոչնչացնելու առաջարկը, որովհետեւ գրանք հաստատած են սուլթանական փիրմաններով. բայց ընդունել է օտարահպատակներին կրօնաւոր չընդունելու առաջարկը,

Բոլոր եկամուտները գանձուեն մի գանձարանում, և պատրիարքարանը իւրաքանչիւր տարի հրատարակի իւր մուտք ու եզրը:

—Պետական յանձնաժողովը անխորհուրդ և անարդար է գտել բոլոր եկամուտների միացումը, բայց և հրատիրել է պատրիարքարանի ուշադրութիւնը իրան պատկանող գումարների բարւոք տնտեսութեան վերայ:

Փողովրդի ներկայացուցիչները պահանջում են, որ երուսաղէմի պատրիարքների գահընկեց անելու պատճառները քննուեն ժողովրդի ներկայացուցիչների և պատուաւորների հոգեորականների մասնակցութեամբ, որոնց ձայնը պէտք է նշանակութիւն ունենայ պատրիարքների թէ ընտրութեան և թէ գահընկեցութեան ժամանակ: Առ այս պատասխան եղաւ, թէ պատրիարքների գահընկեցութեան և ընտրութեան համար կայ պետական օրէնք, որ կանոնական է դարձած երուսաղէմի եկեղեցու համար: Եւ սահմանուած կարգից շեղուելու անհրաժեշտութիւն չկայ:

Ժողովուրդը պահանջում է, որ Ս. Յարսութիւն տաճարում յունարէն ժամերգութեան ժամանակ արարերէն երգեցութիւն էլ լինի: Պատասխան.—որովհետեւ Ս. Յարութեան տաճարում ի վաղուց անտի պետական կարգադրութիւն կայ որ պահանջում է եեղած դրութեան—statu quo—ի անխախտ պահպանութիւն, ուստի և արարերի պահանջը Ս. Յարութեան տաճարում ժամերգութեան վերաբերութեամբ անընդունելի համարել: Իսկ տեղացիների միւս եկեղեցիներում, թէ քաղաքում և թէ գիւղերում, արդէն առանց որ և է արդեկքի՝ արարական երգեցողութիւնը կիրառութեան մէջ է, ուստի և առ այս նրանց պահանջը համարել անհիմն:

Վերջապէս արարները պահանջում են, որ վարկուֆները գրուեն հասարակութեան անունով: Պետական

յանձնաժողովը պատասխանեց, որ այդ պահանջը կը կատարուի այն ժամանակ, երբ նոր ընդհանուր օրէնք կը հրատարակուի անշարժ կալուածքներ ձեռք բերելու վերաբերութեամբ։ Այն ժամանակ անշորժ կալուածները կը գրուին եկեղեցիների, սուրբ տեղերի և հասարակութիւնների անունով. բայց քանի որ հին կարգը կայ, պէտք է առաջնորդուել հին կանոններով։ Յառաջ բերելով վերոյիշեալը, Արք. Եկետ. (№ 44) ասում է. յուսանք, որ պետական որոշումը բաւականութիւն կըտայ երկու կողմերին էլ և կապահովի եկեղեցական—հասարակական կեանքի խաղաղ և անդորր բարգաւաճումն մեծ և սուրբ անցքերի երկրում։

Երուսաղէմի օրթոդոքս պատրիարքութեան մէջ օրթոդոքս արաբների իրաւասութեան վէճերը կարգադրելու համար օսմաննեան ներքին գործերի նախարարութեան հրամանին համեմատ, որ տրուած է 1910 թ. Օգոստոսի 9-ին, Երուսաղէմի օրթոդոքս պատրիարքարանը խառն ժողովի անդամների ընտրութեան համար սահմանել է կանոններ։

Այս կանոնին համեմատ (յօդ. 3) հասարակութեան իւրաքանչիւր անդամ, որ 20 տարեկան է, կարող է ընտրող լինել, իսկ ընտրելին (յօդ. 4) 30 տարեկանից պակաս չըպէտք է լինի, այն էլ ծննդեամբ օսմաննեան հպատակ։

Աշխարհական անդամների թիւը լինելու է վեց, և որովհետեւ Երուսաղէմի պատրիարքութեան թեմերը 13 են, ուստի այդ թեմերը հերթով ընտրում են իրանց կողմից անդամներ ըստ առաւելութեան ձայնից։

Եւ այսպէս, ասում է Արք. Եկետ.-ը, նոյեմբեր ամսում Երուսաղէմի պատրիարքարանին կից կոչում է և երկրորդ վարչական հաստատութիւն—խառն յանձնաժողով, որը պէտք է Սուրբ Սինոդի հետ միասին աշխատի, ինչպէս այս լինում է 1863 թուից սկսած Կ. Պօլսում։